## 46-ՐԴ ՆԻՍՏ

**13 դեկտեմբերի 1918թ.**

Նիստը բացվում է երեկոյան ժ. 7[30]-ին՝ նախագահությամբ *Ա. Սահակյանի.* մինիստրական օթյակում են Մինիստր-նախագահը, ներքին գործոց, խնամատարության, պարենավորման, իրավարարության մինիստրները և պետական կոնտրոլյորը:

*Մինիստր-նախագահ* - Կարդում է գեն[երալ] Դենիկինի գրությունը, որով իր և կամավորական բանակի կողմից ողջույն է ուղարկում հայ ժողովրդին:

Դաշնակցական ֆրակցիայի կողմից Մ. Հարությունյանն առաջարկեց փոխադարձ ողջույն ուղարկել Ռուսաստանին ի դեմս գեն[երալ] Դենիկինի:

Որոշվեց հիշյալ գրության պատասխանը թողնել մշակելու կառավարությանը՝ Ավագների խորհուրդի հետ միասին:

*Ս. Տեր-Մարտիրոսյան* - Անում է երրորդ ընթերցումը Խ. Կարճիկյանի և գեն[երալ] Վիշինսկու ընտանիքներն ապահովելու և հեռագրական գործակալություն հիմնելու մասին եղած օրինագծերի, որոնք ընդունվում են խորհրդարանի կողմից և հանձնվում խմբագրական հանձնաժողովին: Խոսք է բացվում Սուրմալու և Ղամարլու ուղարկվող պառլամենտական հանձնաժողովների լիազորությանց մասին:

*Գ. Խաչատրյան* - Առաջարկում է նախորդ նիստի անցած բանաձևին կցել իբրև հավելում այն, որ հիշյալ հանձնաժողովներն իրավունք ունեն տեղում անել կարգադրություններ կառավարության միջոցով:

Առաջարկն ընդունվում է և վեճը՝ սպառվում:

*Ա. Խոնդկարյան* - Զեկուցում է սառը զենքերի գրավման օրինագծի մասին:

Օրինագիծն ընդունվեց և որոշվեց հանձնել օրենսդրական հանձնաժողովին, որ նա հարմարեցնի կցելու այն առհասարակ հրազենների գրավելուն վերաբերող օրենքին, որ ընդունել է խորհրդարանը:

*Ա. Շահմազյան* - Զեկուցում է զինվորականների աստիճանավորման օրինագծի մասին, որ և ընդունվում է խորհրդարանի կողմից:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 12-ին:

«Զանգ», 5 հունվարի 1919թ.